

Բոլոր տարին ո՞րչափ անծրեւ կուգայ Գաղղիոյ մէջ.

— Գաղղիոյ ծովեզերքը բոլոր տարին եկած անծրեւին միջին չափն է 67 խորանարդ հարիւրամեծր. Փարիզ 50, Լիոն 89:

Միլան եկած տարեկան անծրեւն է 96 խորանարդ հարիւրամեծր, Վենետիկ 81, Լոնտրա 53, Մարսիլիա 47, Փեթրպուրկ 46:

Նորվեկիոյ Պէրկէն քաղաքը եւրոպայի ամէն քաղաքներէն աւելի շատ անծրեւ կուգայ, այնպէս որ հոն եկած տարեկան անծրեւին չափն է 224 հարիւրամեծր:

Բոլոր տարին ո՞րչափ անծրեւ գալը ի՞նչպէս կրնայ չափուիլ,

Անծրեւաչափ անուանով աման մը կայ, անծրեւը անոր մէջ ժողվելով: Աս ամանը գլան մըն է որ երկու յատակ ունի. վերինը ձագարի տեղ կըռնէ, իսկ վարինը ջուրը մէջը կպահէ քովն ալ խողովակ մը կայ որ ջրին բարձրութիւնը կըցուցնէ:

Ինչէ՞ն է որ սեպտեմբերէն մինչեւ մարտ աւելի շատ անծրեւ կուգայ քան թէ մարտէն սեպտեմբեր.

— Վասն զի ամառն անցնելէն ետեւ օդոյն տաքութիւնը քանի կերթայ կպակսի. ուստի ջրային գոլորշիքները օդուն մէջ չկարենալով կենալ՝ անծրեւ կդառնան:

(Շարայարութիւնն յառաջիկայս.)

## Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

# Ն Ո Ր Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ի.

Գ Ր Ե Ա Ց

## ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՅԱՅԵԱՆ.

Հիմն Կսախարանի պատմութեանն ետեւէն՝ իբրեւ շարունակութիւն կամ ամբողջացուցիչ մասն՝ ահաւասիկ կընծայէ Հեղինակը ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ:

Իւր աղբիւր եւ առաջնորդ առած է չորից Աւետարանչաց պատմութիւնը, ըստ ժամանակագրութեան եւ ըստ նիւթոյն միացընելով եւ կապելով նոցա պատմածները: Եւ որովհետեւ Գործի Առաջնորդը կշարունակէ Աւետարանչաց պատմութիւնը, ուստի անկէ կբաղէ Հեղինակը եկեղեցւոյ սկզբնաւորութեան եւ յառաջանալուն պատմութիւնը:

Ոճոյն եւ լեզուին կողմանէ՝ այս Բ հատորին մէջն ալ՝ Հեղինակը — հաւատարիմ իւր սկըզբանը — կջանայ բնագրաց ոճէն եւ դարձուածքներէն չհեռանալ. այլ աշխարհաբառ ընտիր լեզուի վերածելով զայն՝ դրուածքին վախճան դրած է ոչ միայն դիւրիմաց ընել ուսանողաց եւ ժողովրդեան ՔՐԻՍՏՈՍԻ Տեառն մերոյ Վարքն ու երկնաբեր Վարդապետութիւնը, այլ միանգամայն եւ տալ ընթերցողաց զճաշակ Աւետարանչաց հոգելից պատմութեանը, որով եւ գրդուել նոցա սիրտը եւ շարժել նոցա հետաքրքրութիւնը բուն սքանչելի բնագիրն ալ կարգալու:

Տպագրութեան մաքրութիւնն ու դիւրընթերց տաւերն եւս յուսամք որ Հեղինակին փափագանացն օգնեն՝ ու շուտով ծաւալեն իւր այս օգտակար աշխատասիրութիւնը, որ թէ դասատանց համար կրնայ ծառայել, եւ թէ բարեպաշտ ժողովրդականաց: Այս վախճանաւ զարդարած է նաեւ Փարիզ փորագրուած բազմաթիւ պատկերներով, որոց իբրեւ ճաշակ համարուն ետեւի երեսը դրուած քանի մի պատկերները:





ՅԻՍԻՍ, ՄԱՐԻԱՅ ԵՒ ԱՅԼԱՅ.



ՅԻՅԱԼՔ ԵՎՈՐՈՅՈՒ ԿԺՈՒԹՈՒՆԷ ԶԻՐԻՈՒՄ.



ՅԻՍԻՍ ՅԻՅԱՐԻ ԱՆՈՒՄԵՐԹՈՒՆԷ ԿՆԱՆԱՐԱՆՈՒՆԷ.



ՅԻՍԻՍ ՀԱՅԷ ԿԱՅՈՒՆԷ.



ՅԻՍԻՍ ԵՐԹԱՅԱՆԷՍ ԿԻՐԱՅ.



ՀՅԻՐԻՔ ԶԻՐԻՈՒՆ ՀԵՒ ՆԵՐԱՅԱՆԱՆ ԽԱՐԵԱՅԱՆ.




ՄԱՐԵՐԹՈՒՆ ԵՐԻՐԻՄ.



ՄԱՍԱԿԱՆԸ ԿԺՐԷՆ ԶԻՐԻՈՒՄ.



ԿԱՐԱ ԱՆԱՅԱՆ ԽԻՐԻՄԸ.



ՅԻՐԹԹՈՒՆ ՂԱՅԻՐԻՄ.



ՅԻՍԻՍ ԻԱՅԱԿԱՆԷՑ ԿՈՂԻՐԱՍ ԽԱՆԷ.



ԻԱՆԷՆ ՋԱՐ ԱՅԱՆԻՆ ԶԻՐԻՈՒՄ.